

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/8

3 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Կապքիմ» ՍՊԸ 22.09.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 04.08.2015 թ-ի կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ թիվ 252/2015 արձանագրության դեմ:

«Կապքիմ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 04.08.2015 թ-ի կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ թիվ 252/2015 արձանագրության վերաբերյալ «Կապքիմ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ընկերությունը կարող էր հանդիսանալ շրջանառության հարկ վճարող, քանի որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն Ընկերությունը չունի այնպիսի 20 տոկոս և ավելի բաժնեմասնակցությամբ մասնակից, որին միաժամանակ պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության 20 տոկոս և ավելի բաժնեմասը:


ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ կողմից «Կապքիմ» ՍՊԸ-ի վերաբերյալ կազմվել է կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ 04.08.2015 թ-ի թիվ 252/2015 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որում մասնավորապես նշվել է.

Համաձայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «Կապքիմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) չի կարող հանդիսանալ շրջանառության հարկ վճարող: Մասնավորապես, օրենքի համաձայն շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին:

Ուսումնասիրությունների, վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ «Կապքիմ» ՍՊԸ-ի հիմնադիր Կարեն Մկրտչյանը փայաբաժին ունի նաև «ՄՕՀՁ» ՍՊԸ-ում:



Ելնելով վերոգրյալից՝ Արձանագրությամբ ընկերությանն առաջարկվել է 2015 թ-ի առաջին և երկրորդ եռամսյակների համար շրջանառության հարկի հաշվարկների փոխարեն ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկներ:

Ըստ Արձանագրության, ընկերության կողմից ներկայացված շրջանառության հարկի հաշվարկներով շրջանառությանը համապատասխան ԱԱՀ-ի գումարը 2015 թ-ի առաջին եռամսյակում կկազմի 1.143.150 դրամ, 2015 թ-ի երկրորդ եռամսյակում՝ 1.182.770 դրամ:

Արձանագրությամբ ընկերությանն առաջարկվել է նաև ճշտել 2014 թ-ի հաշվարկները: Մասնավորապես, 2014 թ-ի համար ԱԱՀ-ի հաշվարկներով վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարներն ըստ եռամսյակների կկազմեն 1-ին եռամսյակում 1.202.406 դրամ, 2-րդ եռամսյակում՝ 1.202.656 դրամ, 3-րդ եռամսյակում՝ 1.184.580 դրամ, 4-րդ եռամսյակում՝ 1.169.652 դրամ:

Քննարկվող դեպքում ընկերությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Մկրտչյանի և Ասլան Հայրապետյանի միջև դեռևս 25.12.2013 թ-ին կնքված բաժնեմասի նվիրատվության պայմանագրի համաձայն Կարեն Մկրտչյանը «ՄՕՀՋ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում սեփականության իրավունքով իրեն պատկանող 50 տոկոս կազմող բաժնեմասն անհատույց նվիրաբերել է Ասլան Հայրապետյանին, պնդում է, որ ընկերությունը կարող էր հանդիսանալ շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության վերոգրյալ պնդումները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից», իսկ նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են. «Գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները»: Իր հերթին, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառվում են. «Կանոնադրական կապիտալում մասնակիցների ներդրումների չափը»:

Քննարկվող դեպքում գույքի նկատմամբ իրավունքի փոխանցման պայմանագիրը, որով Կարեն Մկրտչյանը Ասլան Հայրապետյանին անհատույց հանձնել է իրեն սեփականության իրավունքով պատկանող «ՄՕՀՋ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 50 տոկոս կազմող բաժնեմասը, կնքվել է 25.12.2013 թ-ին, սակայն «ՄՕՀՋ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 50 տոկոս կազմող բաժնեմասի սեփականության իրավունքի փոփոխության փաստը գրանցվել է միայն 12.08.2015 թ-ին: Այսինքն, սեփականության իրավունքի փոփոխության փաստը առաջացել է 12.08.2015 թ-ին:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալ իրավանորմերի դրույթները Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատում բերված պնդումներն այն մասին, որ ընկերությունը կարող էր հանդիսանալ շրջանառության հարկ վճարող, քանի որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն չունի այնպիսի 20 տոկոս և ավելի բաժնեմասնակցությամբ մասնակից, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության 20 տոկոս և ավելի բաժնեմասը, հիմնավոր չեն, որովհետև



իրականում «ՄՕՀՋ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 50 տոկոս կազմող բաժնեմասի սեփականության իրավունքի փոփոխության փաստը գրանցվել, հետևապես իրավական ուժ է ստացել միայն 12.08.2015 թ-ին: Այսինքն, մինչ այդ ընկերության հիմնադիր Կարեն Մկրտչյանը «ՄՕՀՋ» ՍՊԸ-ում ունեցել է 20 տոկոս և ավելի փայաբաժին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Արձանագրությունը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 04.08.2015 թ-ի կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ թիվ 252/2015 արձանագրությունը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

